ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, ՀՀ, Գյումրի

Էլ. հասցե՝ *ofelya.hovhannisyan82@gmail.com*

DOI: 10.24234/scientific.v3i53.397

ԱՄՓՈՓՈՒՄ

Մխիթար Գոշը մեծ հեղինակություն է վայելել ոչ միայն մտավորականների, այլև ժամանակի քաղաքական ու պետական գործիչների շրջանում՝ լինելով Զաքարե Երկայնաբազուկի խոստովանահայրն ու խորհրդատուն: Մխ. Գոշն իր առակների ժողովածուն կազմել է ուսուցողական նպատակներով: Նրա համար առակը հրապարակախոսության միջոց է՝ դրվատելու առաքինությունները, ծաղրելու պակասամտությունը, հիմարությունն ու տգիտությունը, խարազելու չարիքը: Մխ. Գոշի առակների ժողովածուն առաջին արձակ ստեղծագործությունն է հայ գրականության մեջ, որը գրված է իբրև գրական–գեղարվեստական երկ: Այս իմաստով Մխ. Գոշը գեղարվեստական արձակի հիմնադիրն է հայ գրականության մեջ: Ավագ դպրոցի հումանիտար հոսքերում գրական տեքստի վերլուծությունը պետք է դուրս գա սոսկ սյուժետային վերապատմման սահմաններից: Գոշի երկերի ուսուցման պարագայում մեթոդաբանական հենքը կառուցվում է իմաստային հետախուզության սկզբունքների վրա: Քանի որ միջնադարյան առակն օժտված է խորհրդանշական մտածողությամբ, այն պահանջում է ոչ թե մակերեսային ընթերցում, այլ «ընթերցում տողերի արանքում»:

Գոշի առակները կառուցված են որպես «ինտելեկտուալ հանելուկներ»: Դրանք ունեն արտաքին շերտ (կենդանիների կամ բույսերի զրույցը) և ներքին շերտ (իրավական և բարոյական նորմը): Ուսումնական գործընթացում աշակերտը

ստանձնում է «վերծանողի» դերը: Նա պետք է կատարի տրամաբանական թռիչք պատկերից դեպի գաղափար:

Գրական տեքստը դառնում է բարոյական փորձադաշտ, որտեղ գեղարվեստական հյուսվածքը միջոց է՝ բարձրագույն արժեքները մատուցելու համար: Վերլուծության կենտրոնում հայտնվում է ոչ թե սյուժեն, այլ այնպիսի բարոյական արժեքներ, ինչպիսիք են արդարությունը, պատիվը, հավատարմությունը և իրավահավասարությունը: Գոշի յուրաքանչյուր առակ մի արժեքային բանաձև է, որը պետք է քննարկվի և գնահատվի դասի ընթացքում:

Բանալի բառեր՝ *առակ, բարոյական արժեքներ, իրավական նորմեր, պատմական հիշողություն, ազգային-մշակութային ժառանգորդություն, բարոյական ինքնավարություն, փաստարկման մշակույթ, սոցիալական պատասխանատվություն, ներքին բարոյական կողմնորոշիչ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասի ընթացքում առանցքային է դառնում Գոշի «կատարյալ մարդու» համադրումը ժամանակակից պատանու իդեալներին: Այստեղ կիրառվում է «բարոյական հայելու» մեթոդը. աշակերտը առակի կերպարի վարքագիծը համեմատում է իր սեփական արժեհամակարգի և իրական կյանքի իրավիճակների հետ: Սա նպաստում է արժեքների ներքնայնացմանը: Երբ աշակերտը ոչ թե ուղղակի լսում է, որ «ագահությունը վատ է», այլ Գոշի առակների միջոցով վերլուծում է ագահության կործանարար ազդեցությունը հասարակական ներդաշնակության վրա, այդ արժեքը դառնում է նրա սեփական համոզմունքը: Օրինակ՝ երբ վերլուծվում է «Լեռների և դաշտերի» վեճը, պատանին տեսում է ոչ թե աշխարհագրական տարածքների բախում, այլ սոցիալական խավերի կամ քաղաքական հավակնությունների բախում: Առակների ոգին սոցիալական դասերի համերաշխությունն է. իշխաններն իրենց տեղում պետք է ճիշտ լինեն, ենթականերն՝ իրենց: Եթե ամեն ինչ խառնվի, անկարգություն կլինի, և կխախտվի հանրային հավասարակշռությունը: Մ. Աբեղյանի նկատումով. «Ամբողջի մեջ երևում է մի մտածող, կարգ ու կանոն սիրող մարդու ոգին» (Աբեղյան, 1946, էջ 188): Գոշը մշտապես պահպանում է Աստծո նախաստեղծ դրվածքը աշխարհի կարգ ու կանոնի մեջ:

Աշխարհայացքային վերոնշյալ տարողունակ ընդգրկումները նպատակադիր ազդեցիկությամբ կարող են կատարել իրենց ազգապահպան դերը գեղարվեստական ձևերով ու միջոցներով: Գրականագետ Դ. Գասպարյանի դիտարկմամբ. «Մխ. Գոշը

իր գիրքը նախատեսել է որպես դաստիարակության միջոց և հասցեագրել նաև գիր ու գրականությունից հեռու հասարակ մարդկանց» (Գասպարյան, 2009 էջ 505):

Մխ. Գոշն իր առակները բաժանել է երեք խմբի՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակների հերոսները կենդանիներ և բույսեր են, չունեն սյուժետային բարդ անցումներ, որոնց հիման վրա կանոնական նշանակություն ունեցող բարոյադաստիարակչական ընդհանրացումներ են արվում: Այսպիսով, այս սկզբունքը գրականության դասը վերածում է անձի ձևավորման դարբնոցի: Գոշի առակները ոչ թե տարերային պատմություն են, այլ խիստ կանոնակարգված համակարգ: Գոշն օգտագործում է եռամաս կառուցվածք, որը համապատասխանում է մարդկային ճանաչողության տրամաբանական փուլերին: Օրինակ՝ մի առակում ասվում է, որ գարին ցորենից ուզում է ավելի խոշոր երևալ, բայց մարդկանց որովայնում նա ուռածություն է առաջացնում: Բարոյախոսականը խոնարհություն է պահանջում և այն, որ ամեն մեկը սովորի իր չափի ու կարողության մեջ մնալ: Թույլի նկատմամբ համակրանքը հաճախ հասնում է ուժեղի ոչնչացնող քննադատությանը: Օրինակ՝ արջի և մրջյունների մասին հայտնի առակը, երբ մրջյունների բույնը քանդող և նրանց խժռող արջին սկսում են խայթել բոլոր համախումբ զեռունները, և ցավից ու անճարությունից իրեն կորցրած արջը գլուխը խփում է քարին ու սատկում: Առակն ուսուցանում է, թե միաբանությամբ և իմաստությամբ զորանում են փոքրերը՝ հաղթելով հզորներին: Կամ՝ սնափառ կաղնին իրեն հզոր ու բոլորի թագավոր է կարծում, բայց նրան համոզում են, որ այդպես չի կարող լինել, քանի որ նրա պտուղը ուղղակի պիտանի չէ մարդկանց: Մի առակում խոհեմ մեկը ծառին հարցնում է, թե որքան բարձրանում է սաղարթը, այնքան խորն են գնում արմատները, ինչի պատասխանը նույնանում է բարոյախոսականի խրատին: Ստեղծական առակների հերոսներն արդեն մարդիկ են, հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ: Նպատակը դարձյալ մնում է խոհախրատական ասելիքը, խորհրդածությունը մարդկայինի մասին: Օրինակ՝ հունաց թագավորի որդին ցանկանում է ամուսնանալ և տարբեր աղջիկներ տեսնելով՝ չի հավանում նրանց արտաքինը: Իմաստունների խորհրդով տարբեր ամանների մեջ լցնում են նույն ճաշը, և արքայազնը, երբ զարմանքով է ընդունում դա, նրան բացատրում են, որ նույնն էլ կանանց պարագայում է. նրանց միայն մարմնի ձևերն են տարբեր: Առակների բարոյախոսությունը զգալի չափով կապվում է քրիստոնեական սկզբունքների հետ, ուր այսաշխարհային կյանքի ունայնությամբ են մերժվում ընչաքաղցությունը, չարությունը և այլն:

Արձակի գեղարվեստական որակներ ու շերտեր հանդիպում ենք պատմագրության, վարքագրության ու վկայաբանության և այլ տեսակների մեջ, բայց բովանդակային, նաև ժանրային առումով գեղարվեստական արձակը ներկայացնում են առակները: Կարող ենք ասել, որ հայ գրականության մեջ առաջին արձակագիրը Մխ. Գոշն է:

Մխ. Գոշի առաջադրած բարոյական և իրավական նորմերը (օրինակ՝ դատավորի անկողմնակալությունը, իշխանության պատասխանատվությունը, մարդու իրավունքների նախնական տարրերը) համադրվում են ժամանակակից ժողովրդավարական և քաղաքացիական նորմերին: Դասի ընթացքում կիրառվում է «Զուգահեռների մեթոդը»: Աշակերտները քննարկում են՝ ինչքանո՞վ է Գոշի «Դատաստանագրքի» կամ առակների բարոյական պահանջը համահունչ 21-րդ դարի իրավագիտակցությանը: Օրինակ՝ Գոշի՝ կնոջ իրավունքների կամ բնության պահպանության վերաբերյալ այլաբանական խրատները համեմատվում են արդի բարոյական նորմերին:

Սա զարգացնում է պատմական հիշողությունը և ազգային-մշակութային ժառանգորդությունը: Պատանին հասկանում է, որ հայկական արժեհամակարգն ունի խորը և կայուն արմատներ, իսկ բարոյականությունը համամարդկային ու անընդհատական համակարգ է: Սա նպաստում է ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը, առանց մեկուսանալու համաշխարհային արժեքներից:

Ավագ դպրոցականների համար քննադատական մտածողությունը ենթադրում է տեղեկատվության վերլուծության, փաստարկների կշռադատման և ինքնուրույն որոշումների կայացման կարողություն:

Այլաբանությունը Գոշի ստեղծագործական համակարգում սոսկ գեղարվեստական պատկերավորման հնարք չէ, այլ յուրօրինակ իմացաբանական մեթոդ: Դաստիարակչական գործընթացում այն կիրառվում է որպես կյանքի բարդ իրավիճակների քննարկման և լուծման կառուցակարգ:

Ուսուցման ընթացքում աշակերտին առաջադրվում է վերլուծել այլաբանական պատկերը (օրինակ՝ բույսերի կամ կենդանիների միջև ծագած վեճը) և այն տեղափոխել իրական հասարակական ու միջանձնային հարաբերությունների հարթություն: Սա թույլ է տալիս բարդ սոցիալական երևույթները քննարկել պարզեցված, բայց խորիմաստ մոդելների միջոցով:

Այս գործընթացը խթանում է վերացարկման կարողությունը: Ավագ դպրոցականը սովորում է թափանցել երևույթների արտաքին շերտից ներս և տեսնել թաքնված ենթատեքստը: Սա ձևավորում է երևույթների պատճառահետևանքային կապերը հասկանալու ունակություն, ինչը հանդիսանում է քննադատական մտածողության անկյունաքարը: Ուսուցիչը ներկայացնում է առակի այն հանգուցային հատվածը, որտեղ գործող անձը կանգնած է դժվարին ընտրության առաջ: Աշակերտները առաջադրում են իրենց սեփական լուծումները՝ դրանք հիմնավորելով թե՛ բարոյական նորմերի և թե՛ իրավական տրամաբանության տեսանկյունից: «Լեռների և դաշտերի» վեճի օրինակով քննարկվում է հասարակական կենսագործունեության երկու կարևորագույն հենասյուների՝ պաշտպանության (լեռներ) և արարման /կերակրման (դաշտեր) նշանակությունը: Գոշը աներեր հավատի գաղափարախոս է: Անմատչելի լեռան առակում հեղինակը քարոզում է

հաստատակամ վերելք: Ով մի պահ դադար տա, նա կգայթի ու կգլորվի ներքև. թուլակամներն ու անարիներները կորչում են, որովհետև համբերություն չունեն, իսկ հաստատակամները, նեցուկ ունենալով իրենք իրենց, վեր են ելնում՝ հասնելով ցանկալի նպատակին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության մեթոդաբանական հիմքը կառուցված է համակարգային և կառուցվածքային-գործառութային վերլուծության սկզբունքների համադրության վրա, ինչը թույլ է տալիս Գոշի առակները դիտարկել որպես դինամիկ և գեղարվեստական ամբողջական կառույց:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նմանօրինակ քննարկումները ստիպում են պատանուն կշռադատել տարբեր արժեքներ, խուսափել միակողմանի և մակերեսային դատողություններից: Այն ձևավորում է հարցերին բազմակողմանիորեն մոտենալու մշակույթ, որտեղ լուծումը որոնվում է ոչ թե հակադրության, այլ ներդաշնակության և փոխլրացման մեջ:

Գոշն իր առակներում վարպետորեն կիրառում է հեգնանքը և բարոյական հակադրությունը, ինչը մանկավարժական տեսանկյունից վերածվում է բանավեճի հզոր գործիքի: Այն ստիպում է աշակերտին դուրս գալ պասիվ ընկալողի դերից և դառնալ ակտիվ վերլուծող:

Երբ աշակերտը բախվում է հեղինակի նուրբ հեգնանքին (օրինակ՝ անտեղի հավակնություններ ունեցող կերպարների նկարագրության ժամանակ), նա ստիպված է լինում վերանայել իր նախնական պատկերացումներն ու կարծրատիպերը: Հեգնանքը քանդում է թվացյալ ճշմարտությունները՝ ճանապարհ բացելով խորքային վերլուծության համար:

Հակադիր կողմերի փաստարկները լսելով և հեղինակային լուծումը վերծանելով՝ պատանին զարգացնում է իր մտավոր ճկունությունը: Նա սովորում է սեփական կարծիքը ձևավորել ու փաստարկել ոչ թե հուզականորեն, այլ հիմնավորված տրամաբանությամբ՝ պատրաստ լինելով ընդունելու բանականության վրա հենված հակափաստարկները:

Միջնադարյան բարոյախոսական տեքստի և ժամանակակից մեթոդների (իրավիճակային վերլուծություն, բարոյական երկընտրանքներ) համակարգված կիրառումը ավագ դպրոցում ապահովում է անձի ձևավորման հետևյալ առանցքային արդյունքները.

- **Բարոյական ինքնավարություն**: Սա ավագ դպրոցականի ձևավորման բարձրագույն աստիճանն է: Աշակերտը ոչ թե մեխանիկորեն «անգիր է անում» կամ ընդունում հեղինակի խրատը, այլ հասնում է բարոյական ճշմարտությանը սեփական տրամաբանական ճանապարհով: Արդյունքում՝ բարոյական նորմը դառնում է ոչ թե արտաքին պարտադրանք, այլ ներքին համոզմունք:

- **Փաստարկման մշակույթ:** Գոշի առակների շուրջ քննարկումները պատանուն սովորեցնում են կառուցել հիմնավորված, գրագետ և տրամաբանված խոսք: Նա սովորում է հենվել փաստերի և իրավական-բարոյական չափանիշների վրա, ինչը չափազանց կարևոր հմտություն է հանրային խոսքի և քաղաքացիական հարաբերությունների մեջ:
- **Սոցիալական պատասխանատվություն:** Այլաբանության միջոցով վերլուծելով հասարակական արատներն ու բարոյական անկումները (ագահություն, անարդարություն, պաշտոնի չարաշահում)՝ աշակերտը ձևավորում է քննադատական, բայց միաժամանակ կառուցողական վերաբերմունք իրականության հանդեպ: Նա սկսում է իրեն ընկալել որպես արդարության և բարոյականության կրող, ով պատասխանատու է հանրային ներդաշնակության պահպանման համար:

Թագավորը ոչ թե լոկ խոսքով, այլ իր անձնական օրինակով պիտի խրատի իր հպատակներին: Երբ ձկների թագավորը մեղադրում է իր ստորադասներին, որ ուտում են իրենցից մանր ձկներին, նրանք համարձակվում են ասել. «Քեզանից ենք սովորում, որովհետև շատերը գալիս են քեզ երկրպագելու, և դու, կուլ տալով նրանց, կերակուր ես դարձնում քեզ համար» («Ձկները և նրանց թագավորը»): Մեկ այլ առակի եզրահանգման մեջ էլ ասում է, թե պետք է «կարեկից լինել տկարներին ու թույլերին և ցանկանալ, որ ազատություն վայելեն նրանք»: Ազատագրական պայքարի ելած իր ժողովրդի մարտական ոգին բարձր պահելու համար Գոշն առաջ է քաշել այն գաղափարը, թե խաղաղությունն անվտանգ պահելու համար պետք է մարտնչել («Քահանան և ավազակը»):

Առակների միջոցով Գոշը ձգտել է նաև ժողովրդի մեջ տարածել իր բարոյախոսական գաղափարները՝ դրվատելով առաքինությունները, ծաղրելով արատները, անմտությունը, խարազանել չարիքը: Երբ անմիտ մարդը, չհավանելով հունապի ծառի տեսքը, կտրում է այն, ծառը զայրանալով ասում է. «Ո՛վ անմիտ, ծառը իր պտղից պետք է ճանաչել, ոչ թե տեսքից» («Անմիտ մարդը և հունապի ծառը»): Բուն իմաստն է՝ մարդը գնահատելի է ոչ թե արտաքին տեսքով, այլ կատարած գործերով: «Աստղերը» առակում այլաբանորեն հայտնվում է այն գաղափարը, որ պիտի ճանաչել սեփական հնարավարության սահմանները:

Աստղերը հավաքվելով որոշում են՝ քանի որ իրենք շատ են, ուստի կարող են արևի ու լուսնի փոխարեն լուսավորել ցերեկն ու գիշերը: Եվ որոշում են նախ հալածել ու փախցնել արեգակին: Բայց երբ ծագում է լուսինը, խամրելով նրա լույսից՝ աստղերը,

խոստովանելով իրենց պարտությունը, ասում են. «Եթե մենք լուսնի լույսից այսպես աղոտացանք, ապա ի՞նչ կլինենք, երբ արևը ծագի»:

Ավագ դպրոցում բարոյադաստիարակչական աշխատանքների կատարելագործման համար առաջադրում ենք հետևյալ հանձնարարականները.

- Խորհուրդ է տրվում ուսուցման գործընթացում նվազեցնել սյուժեի վերաշարադրմանը տրվող ժամանակը՝ ավելացնելով այլաբանական պատկերների իմաստային վարժանքները:
- Ուսուցումը պետք է կառուցվի խնդրահարույց իրավիճակների շուրջ: Յուրաքանչյուր առակ պետք է ներկայացվի որպես բաց հարց, որի լուծումը պետք է առաջարկի աշակերտը նախքան հեղինակային խրատին ծանոթանալը:
- Մխիթար Գոշի ժառանգությունը պետք է դիտարկվի գրականության, պատմության և հասարակագիտության համատեքստում: Սա կօգնի աշակերտին տեսնելու բարոյականության և իրավունքի միասնությունը:
- Դասարանում պետք է ստեղծվի վստահության մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր աշակերտ կկարողանա բարձրաձայնել սեփական բարոյական կասկածները՝ ստանալով խմբային աջակցություն՝ հիմնված Գոշի մարդասիրական սկզբունքների վրա:

Մխիթար Գոշի բարոյախոսական ժառանգությունը ոչ թե սոսկ միջնադարյան մշակույթի մասունք է, այլ ավագ դպրոցականի բարոյական զարգացման և արժեհամակարգի կայացման հզոր խթան: Միջնադարյան հայ իմաստնությունը՝ իր համամարդկային ու իրավական շեշտադրումներով, լիովին համահունչ է ժամանակակից կրթական պահանջներին: Այն ունակ է դառնալու պատանու ներքին բարոյական կողմնորոշիչը՝ օգնելով նրան կայանալու որպես գիտակից քաղաքացու և պատասխանատու անհատի:

Առակների ժողովածուն փակող հիշատակարանում Մխ. Գոշը տագնապ ու մտավախություն ունի, թե ժամանակի հոլովույթում իրեն չեն հասկանալու, քանզի ստեղծագործել է հասարակ համարվող գրական տեսակով: Սակայն հեղինակը կարողանում է հաղթահարել իր ներքին երկվությունները՝ ստեղծելով յուրօրինակ առականին, որի մեջ արծարծված գաղափարների ներդրումը ուսուցման գործընթացում ապահովում է ոչ միայն գիտելիքների հարստացում, այլև իրականացնում է կրթության գլխավոր առաքելությունը՝ բանական և բարոյական մարդու կերտումը: Ինչպես իրավացիորեն նկատում է գրականագետ Դ. Գասպարյանը, « «Դատաստանագիրք» ստեղծողն ու առակներ գրողը նույն հայացքով է նայում իրականությանը» (Գասպարյան, 2009, էջ 511):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության ընթացքում իրականացված տեսամեթոդաբանական վերլուծության, Մխիթար Գոշի առականու բովանդակային-առանցքային շերտերի վերլուծության և ավագ դպրոցի հումանիտար հոսքերում դրանց ներդրման մանկավարժական մեխանիզմների մշակման արդյունքում հանգել ենք հետևյալ հիմնարար եզրահանգումներին.

1. **Մեթոդաբանական «իմաստային հետախուզություն»:** Ցույց է տրված, որ ավագ դպրոցում Գոշի առակների ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ավանդական՝ սյուժետային-վերապատմողական ուսուցումից դեպի «իմաստային հետախուզության» և «տողերի արանքում ընթերցման» մեթոդաբանական հարացույցին անցումով: Հաստատվել է, որ միջնադարյան այլաբանական տեքստը, գործելով որպես «ինտելեկտուալ հանելուկ» և «բարոյական փորձադաշտ», ապահովում է աշակերտի ճանաչողական թռիչքը արտաքին պատկերային շերտից դեպի ներքին իրավաբարոյական նորմը: Սա նպաստում է վերացարկման, պատճառահետևանքային կապերի բացահայտման և խորքային-ենթատեքստային վերլուծության ունակությունների ձևավորմանը՝ հաղթահարելով մակերեսային ընկալումներն ու կարծրատիպերը:
2. **Բարոյական «ինքնավարություն»:** Աշակերտը, վերծանելով արդարության, պատվի, հավատարմության, իրավահավասարության և սոցիալական համերաշխության Գոշի առաջադրած «արժեքային բանաձևերը», բարոյական ճշմարտությանը հասնում է սեփական տրամաբանական դատողությունների միջոցով: Արդյունքում բարոյական նորմը դադարում է ընկալվել որպես արտաքին պարտադրանք և վերածվում է անձի ներքին ինքնավար համոզմունքի ու վարքագծային կողմնորոշիչի:
3. **Քաղաքացիական իրավագիտակցություն և փաստարկման մշակույթ:** Բացահայտվել է Գոշի բարոյախոսական և իրավական ժառանգության («Դատաստանագիրք» և առականի) աշխարհայացքային միասնությունը, որտեղ դատավորի անկողմնակալության, իշխանության պատասխանատվության, անձնական օրինակի և թույլերի պաշտպանության գաղափարները համահունչ են 21-րդ դարի պետականաշեն արժեքներին: «Զուգահեռների մեթոդի» և հեղինակային հեգնանքի վերլուծության միջոցով աշակերտների մոտ ձևավորվում է հանրային խոսքի, հիմնավորված տրամաբանության և քաղաքացիական պատասխանատվության վրա հենված փաստարկման մշակույթ, որը նրանց նախապատրաստում է հասարակական ներդաշնակության պահպանմանն ու քաղաքացիական ակտիվ դիրքորոշմանը:
4. **Ազգային-մշակութային հարատևություն և միջառարկայական կիրառականություն:** Հիմնավորված է, որ Գոշի երկերի ուսուցումը, զարգացնելով պատմական հիշողությունն ու ազգային ինքնագիտակցությունը, միաժամանակ կանխում է մշակութային ինքնամփոփումը՝ ազգային արժեքները դիտարկելով համամարդկային համատեքստում: Հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկվում է ավագ դպրոցի հումանիտար հոսքերում ներդնել «Գրականություն-Հասարակագիտություն»

միջառարկայական նախագծեր: Դրանց շրջանակներում Գոշի գաղափարական համակարգը ծառայում է որպես արդի բարոյական ու իրավական կոնֆլիկտների լուծման մոդել՝ իրականացնելով կրթության գլխավոր առաքելությանը՝ բանական, բարոյական և պատասխանատու քաղաքացու կերտումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գոշ Մ. Առակներ. Սովետական գրող. Երևան. 1980.

Գոշ Մ. Գիրք Դատաստանի. Հայաստան. Երևան. 1975.

Աբեղյան Մ. Հայոց հին գրականության պատմություն *(2)*. ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն. Երևան. 1946.

Բադալյան Ս. Մխիթար Գոշի սոցիալ-իրավական հայացքները. Մխիթար Գոշ. Երևան. 2002.

Գասպարյան Դ. Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն, Երևան. Տիգրան Մեծ. 2009.

Իշխանյան Ռ. Հայ հին գրականության պատմություն. Երևանի համալսարանի հրատարակչություն. Երևան. 1993.

Նալբանդյան Վ. Միջնադարյան հայ գրականության հիմնական ուղղությունները. Լույս. Երևան. 1982.

REFERENCE LIST

Abegyan M., Istoriya drevnearmyanskoj literatury *(History of Ancient Armenian Literature)*. (*2*) Izdatel'stvo Akademii nauk Armyanskoj SSR. Erevan. 1946.

Badalyan S., Social'nye i pravovye vzglyady Mhitara Gosha *(Social and Legal Views of Mkhitar Gosh)*. Mhitar Gosh. Erevan. 2002.

Gasparyan D., Istoriya drevne- i srednevekovoj armyanskoj literatury *(History of Ancient and Medieval Armenian Literature)*. Erevan. Tigran Velikij. 2009.

Gosh M., Poslovicy *(Fables)*. Sovetskij pisatel. Erevan. 1980.

Gosh M., Kniga Suda *(The Law Code)*. Ajastan. Erevan. 1975.

Ishkhanyan R., Istoriya drevnearmyanskoj literatury *(History of Ancient Armenian*

Literature). Izdatel'stvo Erevanskogo universiteta, Erevan. 1993.

Nalbandyan V., Osnovnye napravleniya srednevekovoj armyanskoj literatury *(Main Trends in Medieval Armenian Literature)*. «Lujs». Erevan. 1982.

РЕЗЮМЕ

НАУЧНО-МЕТОДИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ ОБУЧЕНИЯ МОРАЛЬНО-ЭТИЧЕСКИМ ИДЕЯМ МХИТАРА ГОША В СТАРШЕЙ ШКОЛЕ

Офелия Оганнисян

Мхитар Гош пользовался большим авторитетом не только среди интеллигенции, но и среди политических и государственных деятелей своего времени, являясь духовником и советником Закаре Еркайнабазука (Закаре Долгорукого). Мх. Гош составил сборник своих басен с обучающей целью. Для него басня — это инструмент публицистики, призванный восхвалять добродетели, высмеивать скудоумие, глупость и невежество, а также бичевать зло. Сборник басен Мх. Гоша является первым прозаическим произведением в армянской литературе, написанным как художественно-литературный труд. В этом смысле Мх. Гош выступает основоположником художественной прозы в армянской литературе.

В гуманитарных классах старшей школы анализ литературного текста должен выходить за рамки простого сюжетного пересказа. В случае обучения произведениям Гоша методологическая база строится на принципах смыслового поиска. Поскольку средневековая басня наделена символическим мышлением, она требует не поверхностного чтения, а умения «читать между строк».

Басни Гоша построены как «интеллектуальные загадки». Они обладают внешним слоем (диалоги животных или растений) и внутренним слоем (правовая и морально-этическая норма). В учебном процессе ученик берет на себя роль «дешифровщика», совершая логический переход от образа к идее.

Литературный текст становится моральным полигоном, где художественная ткань служит средством передачи высших ценностей. В центре анализа оказывается не сюжет, а такие нравственные категории, как справедливость, честь, верность и равноправие. Каждая басня Гоша — это ценностная формула, подлежащая обсуждению и осмыслению в ходе урока.

Ключевые слова: *басня, моральные ценности, правовые нормы, историческая память, национально-культурное наследие, моральная автономия, культура аргументации, социальная ответственность, внутренняя моральная ориентация.*

SUMMARY

SCIENTIFIC AND METHODOLOGICAL RATIONALE FOR TEACHING THE MORAL AND ETHICAL IDEAS OF MKHITAR GOSH IN HIGH SCHOOL

Ophelia Hovhannisyan

Mkhitar Gosh enjoyed great authority not only among intellectuals but also among the political and state figures of his time, serving as the confessor and advisor to Zakare Yerkaynabazuk (Zakare the Long-armed). Mkh. Gosh compiled his collection of fables for educational purposes. For him, the fable was a publicistic tool designed to praise virtues, ridicule foolishness, stupidity, and ignorance, as well as to scourge evil. Mkh. Gosh's collection of fables is the first prose work in Armenian literature written as a literary and artistic creation. In this sense, Mkh. Gosh stands as the founder of artistic prose in Armenian literature. In high school humanities tracks, the analysis of a literary text must go beyond mere plot retelling. When teaching Gosh's works, the methodological framework is built upon the principles of semantic exploration. Since the medieval fable is imbued with symbolic thinking, it requires not a superficial reading, but the ability to "read between the lines". Gosh's fables are constructed as "intellectual riddles." They feature an outer layer (dialogues between animals or plants) and an inner layer (legal and moral-ethical norms). In the learning process, the student assumes the role of a "decoder," making a logical leap from image to idea. The literary text becomes a moral testing ground, where the artistic fabric serves as a vehicle for conveying supreme values. The focus of analysis shifts from the plot to moral categories such as justice, honor, loyalty, and equality. Each fable by Gosh is a value formula to be discussed and evaluated during the lesson.

Keywords: *fable, moral values, legal norms, historical memory, national-cultural heritage, moral autonomy, culture of argumentation, social responsibility, internal moral compass.*

Հոդվածը սպացվել է՝ 17.08.2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 19.08.2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 27.09.2026